h.1320230
19-11-2024թ.
Նախընտրած ծանուցման ձևը՝
Էլ.փոստի միջոցով

Հասցեատեր՝ *Լոռու մարզպետարան*

Դիմող՝ *«ՈՒՂՂԱԿԻ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ» ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ*
Հասցե՝ *ԼՈՌԻ, 2001, ՎԱՆԱՁՈՐ, ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ Փ., 47/13-1,*
directdemocracy451@gmail.com : 37477343745

ՀԱՐՑՈՒՄ

ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ խնդրում եմ տրամադրել տեղեկություններ.

Հղում անելով՝ Սպիտակ համայնքի համայնքապետ Քաջայր Նիկողոսյանի N1096 որոշմանը ըստ որի ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 46-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, «Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14.1-ին հոդվածով, հաշվի առնելով համայնքապետարանի աշխատակազմի մշակույթի, կրթության, սպորտի, երիտասարդության և տուրիզմի բաժնի պետ Մելանյան Դանիելյանի զեկուցագիրը, Տեղական ինքնակառավարման օրվա՝ նոյեմբերի 10-ի կապակցությամբ ավագանու՝ 2024 թվականի նոյեմբերի 12-ի հերթական նիստին ներկա անդամների համար հյուրասիրություն, ծաղկային կոմպոզիցիաներ և հուշանվերներ ձեռք բերելու նպատակով որոշել է Սպիտակ համայնքի 2024 թվականի բյուջեի «Այլ մշակութային կազմակերպություններ» գործառնական դասակարգման «Հատուկ նպատակային այլ նյութեր» տնտեսագիտական դասակարգման 4269 հոդվածից հատկացնել 173040 ՀՀ դրամ:

Կազմակերպության 13.11.24թ.-ի հարցմանն ի պատասխան Սպիտակի համայնքապետարանը 15.11.2024թ. պատասխանել է, որ նվերներ տրվել է ավագանու նիստին ներկա 16 անդամներից 14-ին բացառությամբ համայնքի ղեկավար Քաջայր Նիկողոսյանի և համայնքի ղեկավարի տեղակալ Արտակ Մաթոսյանի, ըստ պատասխանի ավագանու անդամների համար նախատեսված է եղել 5 ծաղկեփունջ 13000 դրամ արժողությամբ (65000 դրամ), 9 հատ 10000 դրամ արժողությամբ Nikolay ժամացույցներ (90000 դրամ), ժամացույցի տուփ 9 հատ 300 դրամ (2700 դրամ) և հյուրասիրություն 15340 դրամի չափով. Ընդհանուր 173040 դրամ, սակայն կազմակերպության 15.11.24թ.-ի հարցմանը Սպիտակի

համայնքապետարանը 18.11.24թ.-ի պատասխանել է, որ նվերներ նախատեսված են եղել ավագանու բոլոր 27 անդամների համար։ Հարկ ենք համարում նշել նաև, որ համայնքի ղեկավարի N 1096 որոշումը ընդունվել է նոյեմբերի 12-ին՝ ավագանու հերթական նիստի օրը և կարելի է եզրակացնել, որ 14 ավագանու անդամների համար իրականացված գնումները կանխամտածված են եղել։ Այս ամենից կարելի է եզրակացնել նաև, որ Սպիտակի համայնքապետարանը մեզ տրամադրել է կեղծ տեղեկատվություն։

Խնդրում ենք ուսումնասիրել այս որոշումը, մեր հարցումները և հարցմանն ստացած պատասխանները և պատասխանել արդյոք մեզ տրամադրված տեղեկատվությունը կեղծ է, և արդյոք համայնքի ղեկավարը գնումների մասին որոշումը կայացրել է ավագանու հերթական նիստից առաջ, թե հետո։

Կազմակերպության կողմից ուղարկված հարցումների և Սպիտակի համայնքապետարանի հարցման պատասխանների հղումները կցված են ամսաթվերին, իսկ համայնքի ղեկավարի որոշման հղումը՝ որոշման համարին։

Պատրաստ եմ վճարել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված սահմանաչափը գերազանցող տեղեկության տրամադրման համար։

Կից՝ 1 ֆայլ

Դիմող՝

ԳԵՎՈՐԳ ՔՈԹԱՆՋՅԱՆ

«Ուղղակի ժողովրդավարություն»

ժողովրդավարական ինստիտուտների ամրապնդման ՀԿ
Հասցե. Լոռու մարզ. ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 47/13-1
Հեռ. (+374)(77) 34-37-45

Ուղղակի Ժողովրդավարություն

"Direct democracy" NGO for consolidation democratic institutions NGO
Address: Lori Region, Vanadzor Tigran Mec 47/13-1

Tel. (+374) (77) 34-37-45

Լոռու մարզպետ

Արամ Ղազարյանին

Հարցում

Հարգելի պարոն Ղազարյան

Հղում անելով՝ Սպիտակ համայնքի համայնքապետ Քաջայր Նիկողոսյանի N1096 որոշմանը ըստ որի ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 46-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, «Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14.1-ին հոդվածով, հաշվի առնելով համայնքապետարանի աշխատակազմի մշակույթի, կրթության, սպորտի, երիտասարդության և տուրիզմի բաժնի պետ Մելանյան Դանիելյանի զեկուցագիրը, Տեղական ինքնակառավարման օրվա՝ նոյեմբերի 10-ի կապակցությամբ ավագանու՝ 2024 թվականի նոյեմբերի 12-ի հերթական նիստին ներկա անդամների համար հյուրասիրություն, ծաղկային կոմպոզիցիաներ և հուշանվերներ ձեռք բերելու նպատակով որոշել է Սպիտակ համայնքի 2024 թվականի բյուջեի «Այլ մշակութային կազմակերպություններ» գործառնական դասակարգման «Հատուկ նպատակային այլ նյութեր» տնտեսագիտական դասակարգման 4269 հոդվածից հատկացնել 173040 ՀՀ դրամ:

Կազմակերպության 13.11.24թ.-ի հարցմանն ի պատասխան Սպիտակի համայնքապետարանը 15.11.2024թ. պատասխանել է, որ նվերներ տրվել է ավագանու նիստին ներկա 16 անդամներից 14-ին բացառությամբ համայնքի ղեկավար Քաջայր Նիկողոսյանի և համայնքի ղեկավարի տեղակալ Արտակ Մաթոսյանի, ըստ պատասխանի ավագանու անդամների համար նախատեսված է եղել 5 ծաղկեփունջ 13000 դրամ արժողությամբ (65000 դրամ), 9 հատ 10000 դրամ արժողությամբ Nikolay ժամացույցներ (90000 դրամ), ժամացույցի տուփ 9 հատ 300 դրամ (2700 դրամ) և հյուրասիրություն 15340 դրամի չափով. Ընդհանուր 173040 դրամ, սակայն կազմակերպության 15.11.24թ.-ի հարցմանը Սպիտակի համայնքապետարանը 18.11.24թ.-ի պատասխանել է, որ նվերներ նախատեսված են եղել ավագանու բոլոր 27 անդամների համար: Հարկ ենք համարում նշել նաև, որ համայնքի ղեկավարի N 1096 որոշումը ընդունվել է նոյեմբերի 12-ին՝ ավագանու հերթական նիստի օրը և կարելի է եզրակացնել, որ 14 ավագանու անդամների

համար իրականացված գնումները կանխամտածված են եղել։ Այս ամենից կարելի է եզրակացնել նաև, որ Սպիտակի համայնքապետարանը մեզ տրամադրել է կեղծ տեղեկատվություն։

Խնդրում ենք ուսումնասիրել այս որոշումը, մեր հարցումները և հարցմանն ստացած պատասխանները և պատասխանել արդյոք մեզ տրամադրված տեղեկատվությունը կեղծ է, և արդյոք համայնքի ղեկավարը գնումների մասին որոշումը կայացրել է ավագանու հերթական նիստից առաջ, թե հետո։

Կազմակերպության կողմից ուղարկված հարցումների և Սպիտակի համայնքապետարանի հարցման պատասխանների հղումները կցված են ամսաթվերին, իսկ համայնքի ղեկավարի որոշման հղումը՝ որոշման համարին։

Հարգանքով՝ «Ուղղակի ժողովրդավարություն»

ՀԿ նախագահ Գ. Քոթանջյան

19.11.2024թ.